

ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ (ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ), ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ 104-Մ ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ, ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ

2013-ին ուսումնարանը նման հրավեր ստացավ Լեհաստանի հանրապետությունից: Այստեղ՝ Տորան քաղաքի մանկական պլաստիկ ստեղծագործության պատկերասրահ-կենտրոնում տեղի ունեցավ երիտասարդ ստեղծագործողների հերթական՝ 17-րդ միջազգային մրցույթը, որը նվիրված էր բնության եւ էկոլոգիայի պաշտպանությանը եւ ընթացավ՝ «Ամեն ինչ կանաչ, ամեն ինչ կապույտ» նշանաբանով: Այդ լայնամասշտաբ ցուցահանդես-մրցույթին, արժանավոր կերպով իրենց մասնակցությունը բերեցին նշյալ ուսումնարանի մի խումբ աշակերտներ: Լեհական այդ քաղաքում ուսումնարանի ուսմասվար Դիանա Սանբուրին եւ գրաֆիկայի բաժնի դասատու Նինո Բասիլաշվիլին, անթաքույց գոհունակությամբ, խոսեցին ու կիսվեցին մրցույթի մասնակիցների հետ եւ իրենց սաների՝ տարբեր մրցույթներում ու, մասնավորապես, այս մրցույթին պատշաճ եւ մեծ պատասխանատվությամբ պատրաստվելու մասին, որը եւ, ինչու չէ, արդարացրեց ուսումնարանի ղեկավարության ու մանկավարժների սպասումները:

Մրցույթի միջազգային ժյուրիի որոշմամբ, արդյունքում, տարիքային համապատասխան հարթակում հաղթեց ուսումնարանի՝ գրաֆիկայի խմբի 8-րդ դասարանի աշակերտուհի Ասմինե Ղազարյանը, ով միաժամանակ պարգևատրվեց թե՛ մեդալով, թե՛ դիպլոմով: Ասմինեն խոստովանեց, որ հաղթանակի զգացումը իրեն, ասես, թելեր է տվել... Դիպլոմներ ստացան նաեւ ուսումնարանի տարբեր դասարանների աշակերտներ Կոտե Ղվաբերիձեն (8-րդ դաս.), Նինա Սարգիսովան (8-րդ դաս.), Մարի Քուշաշվիլին (8-րդ դաս.), Թաթիա Մամուլաշվիլին (6-րդ դաս.), Էլենե Ղավիթաշվիլին (6-րդ դաս.): Դիպլոմների արժանացան նաեւ ուսումնարանի դասատուներ Նինո Բասիլաշվիլին, Թեոնա Գասիշվիլին եւ Թամունա Նակաիձեն: Ի սրտե շնորհավորում ու լուսավոր ճանապարհ ենք մաղթում ձեզ, ապագա գեղանկարիչներ:

ՄԱՍԻՆԻՍ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՐԹԱՆՈՒՄ